

ՀԱԿՈՒ ՄՆՁՈՒՐՈՒ ԵՍ-Ը

«Մարդն ալ, գրականությունն ալ աշխարհագրության ենթակա են: Աշխարհագրությունը կշինե գրականությունը»,-պարբերաբար հաստատված ժշմարտությունը ամրագրում է Հակոբ Մնձուրին՝ իր ստեղծագործ ես-ի ծագումնաբանությամբ վկայելով ասվածի անբեկելիությունը. ի՞նչը պետք է լիներ նրա ստեղծագործության թեման, եթե հայրենական բնաշխարհը չսներ գրողի երևակայությունը: Գյուղանկար, դաշտանկար, լեռնանկար, գետանկար, ձյունանկար, դրվագ առ դրվագ բնանկարի ամբողջականությունը տրոհվեց պատառիկների, և բառերով բանվեց, հյուսվեց, պատկերագրվեց ու նյութականացավ հայրենանկարը, որը հայրենիք էր դառնում միմիայն մարդու և բնության հաշտ ու խաղաղ գոյակցությամբ, խոնարհ նվիրումով և տքնանքով: Պատկերների այս առատության մեջ առանձնանում և շեշտադրվում է Հակոբ Մնձուրու ինքնանկարը՝ հայի, արմտանցու, գյուղացու, հացագործի, հաշվապահի, հնազանդ որդու և սիրառատ հոր դիմանկարը, և այս, թվում է, սոցիալական անհամատեղելի որակների հանրագումարից գոյավորվում է մտավորականի և գրողի բացառիկ ես-ը՝ հայոց ազգային կերպարի առանձնակը: Ռ՛վ է նրա ես-ը՝ հայերեն ու հատկապես թուրքերեն անզուգական վայելչագրող, համատարած անգրագետ թուրք միջավայրում փնտրված ու արժևորված մեկը պատանի հասակից.«... Միակ թուրքերեն կարդալ, գրել գիտցողն էի: Ես կգրեի կամ կկարդայի ամենուն նամակը, ինձի կարդացնել կուտային պաշտոնական գրությունները»¹: Պատանի Հակոբի հպարտությունը իր շնորհով անխառն չէր, թուրքը տգետ ու հավակնոտ էր՝ էթնիկ նվաստացմամբ թունավորում էր տղայի ներաշխարհը՝ «Մեղք, որ Արմանի ես» հակահայ սահմանումով:

Կրթություն և աշխատանք, ընթերցման անհագուրդ պահանջումը և իր ապրած տարածքի, մարդկանց, բարքերի, տարբեր ազգությունների էթնիկ հոգեկերտվածքի ճանաչողություն՝ սրանք Մնձուրու ես-ի արար-

¹ Հակոբ Մնձուրի, «Տեղեր, ուր ես եղեր եմ», Ստամբուլ, 1984, էջ 15:

ման նախահիմքերն էին: Տոհմիկ հողագործների և հացագործ վարպետների գերդաստանում արվեստագետ էր ծնվել, գիտեի՞ն այդ մասին, թե՞ չհասցրեցին իմանալ, կարևոր չէր. ամեն ինչ արվում էր տղայի կրթության համար, բայց գերդաստանի հոգսը նաև նրանն էր, և փոքրուց սահմանվեց նրա արժեհամակարգի գերակա մեծությունը՝ մենք-ը, որ դեռ գերդաստանն էր. ես-ը չէր կարող ինքնուրույն կամք ու բացահայտ ինքնություն հռչակվել: Դժվար էր ես-ի կազմավորումն ու տարանջատումը գյուղաշխարհի տոհմիկ բարքերի միջավայրում. համայնքը գորավոր էր, նրա վճիռներն՝ անբեկանելի:

Երիտասարդ Զակոբի ցանկությունն ու ծաշակը զրոյացվում էին անգամ այնպիսի նուրբ ներանձնական խնդրում, ինչպիսին ամուսնությունն էր. «1906-ին նամակ մը եկավ երկիրեն: Ձիս նշաներ էին: Որո՞ւ: Ողիտային Կորչոյենց: Ան բնավ միտքես չէր անցներ: Միտքս Մանուկանց Մարոն, Բարեկանց Նանոն, Տողանենց Նանոն էին»¹: Սրանք էին այն սիրունները, որ դեռ պատանի՝ Զակոբի մեջ արական թրթիռներ էին արթնացրել. նրանց մեջ չէր գերդաստանի կողմից ընտրված Ողիտան, և այնուամենայնիվ, ոչ մի ընդվզում, ոչ մի ներհակություն, մեն մի նախադասություն՝ «Ան բնավ միտքես չէր անցներ», և բացահայտվում է ազգային ես-ի լիակատար հնազանդությունը՝ համազգային մենք-ին: Խիստ էին գավառի բարոյական կանոնները, բայց այլ կերպ հնարավոր չէր լինի դարավոր պետականագրկման պայմաններում առողջ ու անվթար պահել ազգային ինքնությունը՝ ուծացման վտանգավոր տեսիլը անվերջորեն հեռանկարում ունենալով:

Միակ անգամը, որ երիտասարդ Զակոբը պարտադրում է իր կամքը ընտանիքի անդամներին՝ գնալ Պոլիս և նշագեղծերը վիրահատել, պարզապես փրկում է նրան, վերադարձին 20-25 վայրկյան նավից ուշացումը պահպանում է նրա ստեղծագործ ես-ը, որպեսզի գրով վերստեղծվի այլևս մեկընդմիջտ իր հողից օտարված ու սպանդված անգգի պատմությունը: Նշագեղծերի վիրահատությունը համոզիչ պատրվակ էր արևմտահայոց գրական բոհեմը նետվելու և գրողի իր ես-ը ծանաչելի դարձնելու, տևականորեն թաքնված ու ծնշված արարող անհատը հասունացել ու ելք էր փնտրում դուրս հորդելու. «Իրիկունները Սկյուտարի Մարքոյին, Պեյլերին բացօթյա սրճարանները կերթայի: Ես զիս ծանցուցի, Զակոբ Տեմիրձյանը ըլլալս: Մեհյանին մեջ զիս կարդացեր էին: Սենպոլիզմեն ազդված տարիներս էին, հավատավոր մըն էի: Կհիանայի, կկարդայի, կլափեի զանոնք»²: Իր հոգևոր ես-ի աճը գաղտնի ընթացք էր՝ հարազատ ու օտար բոլոր հայացքներից թաքուն: Գրքերի ու

¹ Տե՛ս նույն տեղում, էջ 166:

² Տե՛ս նույն տեղում, էջ 173:

պարբերականների հանքեր էին պեղվում քուեջի գրադարանից մինչև ամենամահավանական վայրերը՝ պատի տակ՝ հողերի վրա, համաշխարհային ամբողջ գեղարվեստափիլիսոփայությունը գնվում ու թաքուն ընթերցվում էր առավոտ վաղ Պոլիսը հացավորող գեղջուկ մի պատանու կողմից, ով մայրենի լեզվին հավասար տիրապետում էր ֆրանսերենին ու անգլերենին: Իր էանյութը սակավապետ ու ժուժկալ գեղջուկի կենսակերպից էր հունցվել, ով ապավինելով մարմնի զորությանն ու անպարագիծ համբերությանը՝ խնայում էր նյութը՝ այն շռայլորեն ոգու փոխակերպելու անկասելի մղումով. «Ես վաթսուն տարվան մեջ հինգ կամ վեց անգամ Թյունել նստած եմ: Այդ չափիկ տեղին ես փարա՝ կուտայի: Գյուղացին կար իմ մեջս: Պեպեքեն կամուրջ 50 փարա էր, Յիսարեն 70 փարա: Պեպեքեն կնստեի: Վերադարձիս գրքերուն տված կըլլայի, կհատներ, երբեմն կըլլար ալ քալելով փուռը կուգայի»¹: Ընթերցանությանը հատկացված կանգառներ ուներ հսկայական հեռավորություններ ոտքերի ամրությամբ հաղթահարող Յակոբը, դրանք նաև իր առանձնության սրբազան պահերն էին՝ իր հոգու ավազանը ալեկոծող, «գիս գիս ընող»՝ կբանաձևեր ինքը: Գրականությունն էր այն զորեղ տարերքը, որ քանդեց Մեծուրու էության խորքերում եռեփող լավան և դուրս նետեց ստեղծագործողի էատարրերը. «Գրող մը ըլլալ կտենչայի: Երկրագործ մը պիտի ըլլայի, թող լլլայի, քաղաքի կյանքը կատեի արդեն, բայց գրող մը պիտի ըլլայի, իմ ըսելիքներս, իմ ամենեն աղվոր ըսելիքներս կխայտային իմ մեջ: Պիտի թափեի դուրս, պիտի պատմեի իմ ընթերցողներու»²: Իսկ ասելիքի ահագնությունը իր ապրած տարածքների հետ ամենասերտ շփումներից էր լեռնացել. Պոլիսը գիտեր տուն առ տուն, փողոց առ փողոց, «Տեղեր, ուր ես եղեր եմ» ժողովածուի պատումներից կարելի է ստեղծել Պոլսի մանրակերտը, և նրա բնակիչների՝ հայ. հույն, հրեա, թուրք, քուրդ, ազգային դիմանկարը, թվում է՝ Մեծուրին ծանոթ է իր երկրի բոլոր մարդկանց: Թվում է, թե՛ դա իրոք այդպես է: Այդպես է, որովհետև հմտացել է ինքնաճանաչման արվեստում, իսկ իր ես-ի տարողությունը անպարփակ է՝ նրանում ապրում են իր բոլոր երկրացիները՝ մեծով ու փոքրով, մամերն ու հարսիկները, պլիկներն ու մանուկները, պապերն ու պանդուխտ այրերը, իր ցեղի էանյութը բաղադրող բոլոր տարրերը՝ գովելի կամ խոտելի, սիրելի կամ մերժելի:

Պատահական չէ, որ «Ես» խորագրով ինքնանկարում հիմնականում իր թույլություններն են շեշտադրված, ինքնաքննության բացառիկ նմուշ, սա մեծարենցյան գրական ինքնադատությունը չէ, այլ ներանձնային թաքուն վախերի, տագնապների, թույլությունների պատկերագրում, ո-

¹ Տե՛ս նույն տեղում, էջ 165:

² Տե՛ս նույն տեղում, էջ 161:

րոնք գուցե թե երբեք էլ չբացահայտվեին, եթե իր ներքին մարդը չլիներ այդքան բաց ու անպաշտպան, նրբազգաց ու վեհերոտ: Երկու անգամ ստույգ մահից փրկված՝ իր վախերը վերագրում էր իրենով հղի մոր կավի լեռան փվածքի տակ մնալուն: Երկինքը նրա ծնունդն օրհնել էր. հորով ու մորով մանկություն էր ընծայել: Երկրորդը փրկությունը վերածնունդ էր՝ թուրքից հռչակված իր գերդաստանի ու ազգի ցավը պատվով կրելու փորձություն. «1915 մայիսին գավառեն նամակ չեկավ: Երկու անգամ պատասխանավոր հեռագիր ուղղվեցավ, չպատասխանվեց: ...Հունիս չորսին հաներ էին գյուղեն: ...Տուներում դռները ժամում դռներում պես պագեր էին ու զատվեր էին: ...Պապս՝ Մելքոն, 88 տարեկան էր, մայրս՝ Նանիկ, 55 տարեկան էր, տղաքս՝ Նուրիանը՝ 6, Մարանիկը՝ 4, Անահիտը՝ 2, Խաչոն 9 ամսվան, կինս՝ Ողիտան՝ 29 տարեկան: Ասոնք ինտո՛ր քալեցին: Պապս մինչև Զուազեղ Աղբյուր չէր կրնար երթալ»¹: Իր խոնարհ ու չընդվզող տեսակը ցավից չգոռաց ու չխենթացավ, մենք-ի ձակատագիրը չկիսելու թաքուն մեղավորություն ունեցավ: Ինքը լքեց հպատակ զոհերի հայոց քարավանը և համալրեց մուռն պատանդների նոսր շարքերը, որոնց ձիչն անգամ, ըստ Հրանտ Մաթևոսյանի, խժռել էր թշնամին: Մնծուրին իր ձիչը վերածեց գրի՝ հայրենական գյուղանկարների, ու պատմեց իր կորած հին երկրի պատմությունը, արմատախիլ արված մենք-ի պատմությունը: Դժվար է ասել, որտեղ է ավարտվում Մնծուրու Մենք-ը և սկսվում Մնծուրու Ես-ը: Դրանք ծույլ ու անտրոհ նույնական էթնոգենետիկ կառույցն են, արյան նույն կազմից ու նույն հոգեմյուսից շաղախված:

«Հաշվեկշիռ» ամփոփիչ ինքնագննումի մեջ Մնծուրին հաշվապահական ժգրտությամբ թվարկում և համակարգում է ստեղծածը՝ հաշվետու լինելով իր ներքին արարչին, ով նրան արդեն բանադրել էր երեք ամիս չգրելու մեղադրանքով. «Բուսական կյանք մը ապրեցա»²: Այդ հոգեզուրկ կեցությունից իրեն փորձում է փրկել՝ իր ստեղծածի կշիռը գոնե մոտավոր ժգրտելով, թվերի վերածելով իր արարչագործության արդյունքը, բայց այդ հոգեմտավոր հունձքը անգնահատելի արժեք է՝ թվային կարգով անարտահայտելի: Մնծուրին փաստում է՝ իր ապրած իրականության մեջ գրականությունը դրամ աշխատելու միջոց չէ. իր ստեղծածը իր միջոցներով հրատարակել ինքը չի կարող. «Ուրեմն ինչո՞ւ կգրեք: Մի՛ գրեք» ինքնահարցին պատասխանում է ի վերուստ դատապարտվածի վճռական համակերպվածությամբ. «Ատ չենք կրնար ընել: Մեր շուրջը, մեր տեսածները, աշխարհը, դուրսը, դեպքերը, մարդիկը մեզ կը լեցնեն: Չենք կրնար միայն դիտել: Պիտի պարավիճք: Պի-

¹ Տես նույն տեղում, էջ 174-175:

² Հակոբ Մնծուրի, «Կռունկ, ուստի՞ կուգաս», Ստամբուլ, 1974, էջ 9:

տի ըսենք: Ինչ է գրականությունը ամենեն վերջը մեկ բառով: ԸՍԵԼ Է: ԻՆՔԶԻՆՔԸ ԳՐԵԼ Է»¹: Հր. Մաթևոսյանն ավելի ուշ նույն միտքը կբանաձևեր այսպես. «Գրականությունը գրողական ես-ի արտածումն է», և քանի որ գրողական ես-ը որոշակի բնակլիմայական միջավայրի ծնունդ է, կոնկրետ ժամանակատարածական չափումի կերտվածք, ապա նրա գիրը չի կարող իր ես-ն արարող աշխարհագրությունը շրջանցել. «Րեժիոնալիսթ» գրականություն մը կ'ընեն, իրապաշտության, ռեալիզմին մեկ ուրիշ տեսակը»²: Իրականում «ռեժիոնալիսթ» գրականություն են ստեղծում բոլոր գրողները, Չարենցը չգրեց Գորիսի, Բակունցը Կարսի, Մահարին Մեզիրեի և Թոթովենցը Վանի գեղարվեստական պատմությունը, Մնձուրին ավելի քան անկեղծ է. «Եթէ Ալը, Արմտանը, Տիվրիկը կամ Երզնկան, Արաբկիրը, Չմշկածագը կը խոսեցնեն, պանծացնելու համար չեն ըներ: Միմիայն ատ տեղերը լավ կը ծանչնամ, քայլ-քայլ գիտեմ, ատկե է»³:

Եթե Նահնուրի «Մենքը» արևմտահայ գրական տարբեր սերունդների պայքարն էր՝ գրական հանգանակների ծղարկման ու ամրագրման ջանքով, ապա Մնձուրու «Մենքը» պայքար ու հայացքների բախում չէր, ժխտում ու բացասում չէր, այլ էթնոհոգեբանության, ազգային կենսագոյության դարերով բյուրեղացած բարձրագույն որակների հաստատագրում, ազգային հոգևոր տիպի անսեփնեթ արարչագործ կեցության համակարգի կարևորում ու արժևորում: Մնձուրու Մենք-ը Աստուծո մարդու նյութը արհամարհող, հոգեմտավոր անծիր պահանջներ ունեցող «ոչ հղկվածներն են», ովքեր արվեստ արարելու անկասելի կիրք ունեն. «Պիտի չընդօրինակենք իրականությունը, պիտի գերազանցենք բնությունը, իրերը: Անձնական գրականություն պիտի ընենք: Մենք պիտի ըլլանք մեր գործերուն մեջ»⁴: Իրապես Հակոբ Մնձուրին իր գրվածքների զգալի մասի հերոսն ինքն է. ինքնակենսագրական ծավալուն պատումներ ունի. մակերեսային քննության դեպքում դրանք կարելի է համարել միայն իր կենսապատումը, այդպիսի մոտեցումը և՛ ճիշտ կլինի, և՛ ակնհայտորեն թերի: Մնձուրու ես-ի բազմաշերտությունը մեկ ինքնության տարածքում տարբեր կերպարների հայտնության հնար է տալիս. նախնականը, հենքայինը գյուղացու, մշակի, հողագործի կերպարն է, ընդհանրական իմաստով բնաշխարհիկ մարդու անխաթար ու անխառն ինքնությունը. «Ամենուն պես մը եղա: Գյուղացի մը, հողագործ մը: Տղայությանս գյուղացի մը չէ՞ի արդեն: Անոր շարունակությունը եղա, կերպարանափոխվեցա:

¹ Տես նույն տեղում, Կ. էջ 11:

² Տես նույն տեղում, Կ. էջ 11:

³ Տես նույն տեղում, Կ. էջ 12:

⁴ Տես նույն տեղում, Կ. էջ 197:

Գարնցանը ըրի, ցորենը, գարին, վիկը ցանեցի, պապերուս հինգ-հազար տարվան երկրագործությունը ըրի, եզները առջևս, ես անոնց ետևը, մաժը աջ ձեռքս, արորը կառավարեցի, մականը ձախ ձեռքս՝ եզնոցը ուղղություն տվի: Արորով արտերը ակոսեցի, տափանով հողերը հարթեցի, գորշ արտերը սրձագույն եղան»¹: Սա Մնձուրու ես-ի կատարյալ վիճակն է՝ ինքնահաշտության և ներքին կուտակումների մղող, ընտանիքի և համայնքի հետ ներդաշն գոյակցություն ապահովող: Հայրենի Արմտանը հայոց բնաշխարհի առատաբուխ անկյուններից էր, աստվածային բարիքով լեցուն մի եղեմ, ուր մարդն անվերջ արարման ընթացքի մեջ էր, և մայր հողը նրան լիուկ ընծայաբերում էր իր գանձերը. «Յոթը անգամ բերք կուտային մեր ծառերը»: Բարեբերության այս չափն իսկապես որ աստվածային է, պտուղների որակն ու բաղադրությունը, տեղացիների սնվելու կարգն ու կանոնները դույզն-ինչ կասկած չեն թողնում, որ խոսքը տևականորեն արմատացած ու բյուրեղացած բարձրագույն մշակույթ ունեցող տեսակի մասին է, որը հոգու խնդիրները լուծում է նաև մարմինը ժիշտ պահպանելով:

Մնձուրին հաճախ է հիշեցնում, որ իր հոգեմյուսը գեղջուկի սակավապետ կենսակերպից է հունցվել. «Ասիական գյուղացի մը, սակավապետ եմ, քիչով կը գոհանամ», չափը իր երկրացիների բարոյական նկարագրի առանցքն է՝ բնության և մարդու հետ հարաբերությունները կարգավորող: Փոքրուց արդեն ժշգրտված էին նրա պարտավորությունների սահմանները, իսկ իրավունքների մասին այդպես էլ հավանաբար ոչ ոք նրան չտեղեկացրեց, որովհետև մենք-ի իրավունքն էր ես-ը կազմակերպելը, մարմնի և հոգու առողջությունը հոգալը, բայց միայն մենք-ի կենսագործունեության ծիրի մեջ և ոչ երբեք որպես ինքնակա գոյություն՝ տարբերակվող պահանջմունքներով և վարքագծով: Իսկ չտարբերակված պահանջմունքներից առաջնայինը պետք է լիներ պապենական օջախը շեն պահելը, շատ զավակներ ունենալը, ինքն ու կինը՝ Ողիտան, ընդամենը չորսն ունեին, պետք էր գոնե կրկնապատկել՝ «Գերդաստանիս Տեմորձենց չորս տուներուն մեջ ամենեն քիչվորը մենք էինք: Տունը շենցնողը, բազմացնողը ես ու Ողիտան պիտի ըլլայինք»²: «Կինս և ես» պատումի մեջ Մնձուրին գեղագրում է կնոջ՝ Ողիտայի կերպարը՝ զուսպ, հնազանդ, ջանասեր. գերդաստանի մեծերի հետ նրա հաղորդակցության լեզուն մունջերենն է, խոսելու իրավունք ունի միայն իր ամուսնու և երեխաների հետ և նրանց միջոցով: Նա ընտանիքի շարժիչն է, առօրյան կազմակերպող կենսաուժը, դեռ մանկուց նա բնութագրվում է որպես ճարպիկ ու ձկուն՝ «Անոր պես չբռնվող չկար»:

¹ Տե՛ս նույն տեղում, Կ. էջ 176:

² Տե՛ս նույն տեղում, Կ. էջ 183:

Հայոց նահապետական ընտանիքը խստորեն սահմանազատել է հարսի և սկեսուրի, կնոջ և տղամարդու գործառույթները՝ նորահարսին վերապահելով գյուղացու դժվարին կենցաղի կազմակերպման հոգսը, որում տղամարդը արտոնյալ կարգավիճակում է՝ փոքրուց իր իրավունքների և պարտավորությունների շրջանակը գիտակցող: Ամեն ինչ պետք է հաստատեր նրա առնական կեցվածքի և արժանապատվության գերակայությունը. գերդաստանի միակ արու զավակ Հակոբը չի խախտում սահմանված կարգը. նա միայն արական գործառույթների իրացնողն է. «Ես էրիկ մարդ եմ, ամուսին եմ» սոցիալ-սեռային որակումը իր վարքագիծը պայմանավորող գործոն է: Անգամ եթե ակնհայտորեն գիտակցում է կնոջ հոգսերի առատության չափը, հանրային կարծիքը անտեսել չի կարող և էշին ինքը պետք է նստի և ոչ նոր ծննդաբերած կինը: Իր վերաբերմունքը գերդաստանի կողմից ընտրված Ողիտայի հանդեպ հոգատար գնահատողական է, այդ զգացողությունը սիրո վեհագույն հրդեհը չէ, նույնիսկ բոցի թրթիռը զգալի չէ, բայց բարձր է հայ տոհմիկ հարսի կերպարի գնահատանքը, նրա կանացի կատարյալ վարքի արժեքի գիտակցումը՝ որպես օջախի հենասյուն, ընտանիքի ողնաշար: Կինը նրան արցունքոտ աչքերով է ժամփել Պոլիս՝ չիմանալով, որ այլևս չեն տեսնելու մեկմեկու, որ հայրենի հողից մեկընդմիշտ արմատախիլ են անելու իրանց տոհմի ծառը, զոհ են գնալու չորս զավակները և մորթվելու է մեծ գերդաստանի արարման նրանց տեսիլը, Ողիտան շարունակելու է ապրել միայն Մնձուրու գրի տարածքում՝ մարմնավորելով խոնարհ ու անարատ հայուհու կատարելատիպը:

Մնձուրու ես-ի հաջորդ մակարդակում հոգևոր մարդն է՝ մտավորականը, ուսուցիչը, գրողը: Ես-ի այս ընթացքը գեներտիկ կոդով էր կանխորոշված. այն ահռելի գիտելիքը, որ տարիների ուսումնառությամբ ու ընթերցանությամբ էր ամբարվել, չէր կարող ինքնանպատակ լինել, շարժուն ու առատախոս, արտաքին շփումների մղվող Մնձուրին պարզապես չէր կարող իր հոգևոր էներգիան չարտամղել դեպի ուրիշը, ով պահանջն ուներ ոգեղեն սնունդի՝ առանց բռնության ու պարտադրանքի, առանց դատաստանի ու թվանշանի, նվիրումով ու գուրգուրանքով. «Բայց լավ ուսուցիչ մը եղա, նույնիսկ այ ավելի լավ ուսուցանող մը: Թիվ չդրի, վերցուցի քննությունները: Քոմետի մըն էին, միջնադարյան հավատաքննություններ մը: Աշակերտը գիտնար կամ չգիտնար, նույն էր ինձի համար: Չուզեցի, որ իր ես-ը զգացվեր: Հարգեցի, օգնեցի իր մեջ իր ես-ին»: Ուսուցիչ-տնօրենի իր կարգավիճակը գործելու ազատություն էր տալիս, իր նախընտրած կրթական մեթոդը կիրառելու հնարավորություն, քանզի վերահսկողություն չկար, ինքն էր իր և իր աշակերտների

¹ Տե՛ս նույն տեղում, Կ. էջ 186-187:

տերը: Ուսուցչի աշխատանքը մտավորականին տեղատվությունից փրկելու հնար էր, ոգեղեն կենսահոսքերի շրջապատույտ ապահովելու միջոց, իր հոգևոր ես-ը պահպանելու և նոր ձևավորվող մանուկ ես-երը ծիշտ կազմակերպելու մղում:

Բայց կեղեքող ու անկասելի պահանջմունքը գրելն էր՝ Գրող մը ըլլալ կը տենչայի: 1914-ին նետվելով Պոլիս՝ Մնծուրու գերագույն նպատակն էր ստեղծագործողի իր ես-ը ծանաչելի դարձնելը: Հակոբ Շեմիրճյան ստորագրությամբ «Մեհյանում» լույս էին տեսել առաջին պատմվածքները, նա անհամբեր էր լսելու գնահատանքի բառեր, որոնք երկար չեն սպասեցնում. Ռուբեն Զարդարյանը արժևորում է նրա առաջին պատկերները. «Ես Մեհյանի մեջ գյուղի գիշերները կարդացի, հիացա, շատ գեղեցիկ էին»:¹ Սա գրողական ես-ի հաստատման առաջին հաղթական քայլն էր, ոգևորության նախնական լիցքերն ապահովված էին՝ Ես զիս ծանչցուցի, Հակոբ Շեմիրճյան ըլլալս: Շրջապատը նրա գրողական պատկերը երևակայել էր առավել ազնվական՝ սլացիկ հասակով, սպիտակամորթ, մինչդեռ գեղջկական հանդերձով, արևախանձ դեմքով երիտասարդի կերպարանքը տարակուսանք էր հարուցում, ինքն էլ հավակնոտ ու պարտադրող գոյություն չէր, զննող հայացքներից փորձում էր թաքնվել՝ դառնալով ավելի վեհերոտ ու ինքնադատ:

Գյուղում ապրած վերջին յոթ տարիները (1907-1914) Մնծուրու համար կուտակումների տարիներ էին, բնության ու մարդու հետ սերտ շփումներից աշխարհաժանաչողությունը բյուրեղանում էր, անկատ գոյանում էր շատ հետո գրելիք նյութը: Հայրենի բնաշխարհին առատորեն բավարարում էր Մնծուրու զգայարանների պահանջմունքը, սիմվոլիստական հովերով տարված արձակագիրը քնարական էջեր էր պատկերագրում՝ Արմտանի բոլոր շշունջներն ու շարժերը բառի վերածելով. «Սեմպոլիզմեն ազդված տարիներս էին, հավատավոր մըն էի: Կը հիանայի, կը կարդայի, կը լափեի զանոնք: Գյուղի գիշերները, գյուղի ձայները կը գրեի: Մտիկ կ'ընեի, կը հալեի եղանակներուն հետ: Բարտիստաններու բարտիները ամեն հովերուն կը փաթթվեին իրարու քույրերու պես, հետո նորեն կը բաժնվեին: Գիշերին մեջ գետին ձայնը ի'նչ խորունկ կուգար ինծի: Առումներուն անհամար գորտերուն համերգը կը հնչեր... հանկարծ կընդհատեին ու նորեն կսկսեին՝ կռռռ... մինչև առավոտ... վընկ... վընկ... վընկ... բլուրներեն ձայներ կուգային: Աղվեսներն էին»²:

Պոլիսը վանում էր՝ հանապազօրյա հացի փնտրտուքի մեջ ստեղծագործ անհատին սպանելու իր կրքով, Արմտանն իր հոգու միջուկն էր, ուր

¹ Տե՛ս նույն տեղում, Կ. էջ 172:

² Տե՛ս նույն տեղում, Կ. էջ 173:

գյուղացի Մնծուրին և գրող Մնծուրին հաշտ էին, ներհյուսված, իրարով լեցուն։ «Մերժեցի Պոլիսը։ Պապենական տունս փակելը, հոս գալ հաստատվիլը չուզեցի։ Եվ միայն այդ ալ չէր։ Ոչ, ավելին կա, գրականության սերս։ Գրող մը ըլլալու իմ տենչերս կային։ Գյուղը իմ ամեն ազատությունս կուտար ինծի։ Իմ ամեն ժամերս իմս պիտի ըլլային»¹։ Գրողը դեռ նոր էր կազմավորվում, կենսահոսքերը դեռ բավարար չէին պատում ստեղծելու համար, պատառիկներ ծնվել էին, բայց կյանքն իրենով դեռ չէր արել։ Մնծուրին «գրել» բառը գրեթե չի գործածում, ասում է՝ պատմեցի, իսկ այն, ինչ պատմում էր, իր անծայրածիր բազմազգ գյուղաշխարհի կենսապատումն էր, որով ավետափ լցվեց մինչև 1914-ի օգոստոսը։

Եվ այնուամենայնիվ, նրան վիճակված չէր վայելել թե՛ բնաշխարհի, թե՛ պոլսահայ բոհեմի բարձրագույն շնորհները, քանի որ շատ շուտով երկուսն էլ այլևս չէին լինելու։ պոլսահայոց մտավոր սերուցքը վերացվելու էր առաջնահերթ, քանզի մարմնի կենսագործունեությունը դադարեցնելու համար նախ պետք է գլուխն անջատել։ Մնծուրին դեռ այնքան հայտնի չէր, որ ազգի գլուխը համարվեր և իր գաղափարներով վտանգ ներկայացներ, և նրա տակավին «չգնահատված» մտավոր ինքնությունը փրկվում է նախժիրից։ Ֆիզիկական փրկություն՝ առավելագույն կորուստներով։ անդամալիորեն խլված էին հայրենիքը, ընտանիքը, բույնն ավերված էր, իսկ բնավեր ու տնավեր ես-ը անարմատ գոյություն է, վթարված ինքնությամբ մեկն է, ցավի մղկտոցը թաքուն կրելու պարտադրանքի գերին։ «Ես ի՞նչ գործ ունեի այս քաղաքը։ Դեպքերը զիս հոս հաստատեցին։ Ինծի մնա՝ ես չէի բաժնվեր մեր բարձրավանդակեն, մեր քնարական գետափերեն։ ԵՍ ՊԱՏԱՆԴ ՄԸՆ ԵՍ ու պատանդ ըլլալով հանդերձ դատապարտված եմ հոս ապրելու»²։

Եթե Մնծուրու կենսաբանական գոյությունը շարունակեց իր ուղղագիծ ընթացքը դեպի ապագա, ապա հոգեմտավոր զարգացումները Եդեռնից հետո միայն մեկ ուղղություն ունեին՝ դեպի անցյալ։ Ներկան դադարել էր սնել նրա գրողական երևակայությունը, լեցուն էին նրա անցյալի բոլոր ժամերն ու տարածքները, իսկ հետեղեռնյան տարիները կարծես ապրվում էին միայն գրով վկայելու համար մինչ 1915-ը գոյած երկրի ու ժողովրդի մասին։ Եղեռնով երկատվեց հայության պատմական երթը, ձեղքվեցին ու խեղվեցին բազում ձակատագրեր, այդ թվում և Մնծուրու կենսագրությունը բաժանվեց երկու հատվածների՝ հայրենիք ունեցող և հայրենազուրկ, ազատ ես-ով ու պատանդ ինքնությամբ, ներկայով ապրող ու ներկա չունեցող։ Ինքնապահպան զորեղ բնազդով ինքն իրեն հրամայեց ապրել, իսկ ձակատագրի լեղին անվերջորեն

¹ Տե՛ս նույն տեղում, Կ. էջ 182։

² Տե՛ս նույն տեղում, Կ. էջ 189։

չզգալու համար իրեն կարգադրեց անջատել ցավի նյարդը. «Քուկիններդ միտք մի՛ բերեր, վնաստ՝ մտքեդ. ի՞նչ կուտեին, ո՞ր կը պառկեին, մի՛ խորհեր»¹:

Իսկ հետո հայաթափ Պոլսում իր հացն աշխատում էր ինչով ասես՝ գրի համար թաքուն պահեր երագելով. հացագործ էր, կերավաճառ, եկեղեցու լուսարար: Մնծուրի գրողը բացահայտ ու խրախուսվող գոյություն չէր այլևս: Դժվարինը ստեղծագործ տեսակի անազատությունն էր, ինչը ոչ միայն նյութական հենարաններ չունենալու արդյունք էր, այլև սոցիումի հոգեզուրկ կեցության հետևանք: Իր կրթության ու գիտելիքների մասին վկայող մի թղթի կտոր չունենալու պատճառով ստիպված էր հեռու մնալ մտավոր գործունեությունից, իրեն սպառել իր կոչվածությանը ներհակ ոլորտներում: «Ի՞նչ ըրի» հերթական ինքնահաշվետվություն մեջ Մնծուրին հաշվում է իր արտադրած էջերի քանակը՝ արձանագրելով, որ կես դարում 1600 էջ է ստեղծել և իր վաստակը կոչում «վտիտ»՝ աստիճանաբար ինքնաձաղկումը հասցնելով գագաթնակետին. «Սեղանի մը վրա եթե մեր կամ օտար գրողներու գործերու կարգին դիցուք թե իմիններս ալ շարեն, թող գիրք չըլլան, թերթերեն հավաքած կտրոններս ըլլան, ես գլխահակ գետին պիտի նայիմ կամ դուրս պիտի ելլեմ, պիտի չկենամ՝ չերևալու համար հոն»²: Այդ «վտիտ» էջերն էլ գրվել էին անկողնում, ավի կամ ծնկի վրա կամ աշխատանքից ազատ սուղ պահերին՝ գործատիրոջ անհամդուրժող հայացքից թուղթը թաքցնելով. իր հոգևոր ցանքսը գողունի էր արել: Էականը հունձքն էր. բոլոր արգելքները մի կերպ հաղթահարելով՝ գրվեց այն, ինչ ուրիշը չէր կարող գրել, պատմվեց այն պատմությունը, որ ուրիշը չէր կարող պատմել:

Դա Հակոբ Մնծուրու պատմությունն էր:

¹ Տե՛ս նույն տեղում, Կ. էջ 175:

² Տե՛ս նույն տեղում, Կ. էջ 200: